ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 288-Ա

19 մայիսի 2026 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 286-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2026 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների Ռեեստր ձևավորելու, պատասխանատու ստորաբաժանում և Ռեեստրի վարման համար պատասխանատու անձինք սահմանելու, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար նշանակելու մասին» N 286-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշումը լրացնել նոր՝ 4-րդ կետով. «4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանին:».

2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

19.05.2026

ՋԱՆԻԿ ԲԱԶԵՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: BAZEYAN JANIK 2208850319

Ջ. ԲԱԶԵՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի մայիսի 19-ի
N 288-Ա որոշման
«Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի մայիսի 18-ի
N 286-Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ

| | |
|---|---|
| Մարինե Գյարզոյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ, (Ռեեստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար) |
| Յուրա Մուշեղյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ (պատասխանատու անձ) |
| Մերի Խաչատրյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ (պատասխանատու անձ) |
| Լիանա Մակվեցյան | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի ավագ իրավաբան, բաժնի պետի պարտականությունները կատարող (պատասխանատու անձ) |
| Մկրտիչ Ղազազյան | - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ (Ռեեստր վարող) |

| | |
|---|---|
| Համիկ Շաhբազյան | - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ (Ռեեստր վարող) |
| Արթուր Բադեյան | - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ (պատասխանատու անձ)»: |

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
22[illegible]50098

miD

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ